

ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՐԴԻ 2002 թվականի հունիսի 13-ի թիվ 2002/584/ԱՆԳ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄ

Ձերբակալման մասին եվրոպական որոշման և անդամ պետությունների միջև հանձնման ընթացակարգերի մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով Եվրոպական միության մասին համաձայնագիրը, մասնավորապես՝ դրա հոդվածներ 31«ա»-ն և «բ»-ն, ինչպես նաև 34«2»«բ»-ն,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը⁽¹⁾,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը⁽²⁾,

Քանի որ.

1) 1999 թվականի հոկտեմբերի 15-ին և 16-ին Տամպերեում անցկացված Եվրոպական խորհրդի նիստի եզրակացության, մասնավորապես՝ դրա 15-րդ կետի համաձայն, անդամ պետությունների միջև էքստրադիցիայի պաշտոնական ընթացակարգը պետք է վերացնել այն անձանց նկատմամբ, ովքեր վերջնական դատավճռից հետո խուսափում են արդարադատությունից, ինչպես նաև պետք է արագացնել էքստրադիցիայի ընթացակարգերն այն անձանց համար, ովքեր կասկածվում են հանցագործություն կատարելու մեջ,

2) քրեական գործերով որոշումների փոխադարձ ճանաչման սկզբունքի իրագործման միջոցառումների ծրագիրը, որը նախատեսված է Տամպերեում անցկացված Եվրոպական խորհրդի նիստի եզրակացության 37-րդ կետով և ընդունվել է Խորհրդի կողմից 2000 թվականի նոյեմբերի 30-ին,⁽³⁾ անդրադառնում է ձերբակալման մասին որոշումների փոխադարձ կատարման հարցին,

3) բոլոր անդամ պետությունները կամ դրանցից մի քանիսը միացել են էքստրադիցիայի ոլորտում մի շարք կոնվենցիաների, ներառյալ՝ «Էքստրադիցիայի մասին» 1957 թվականի դեկտեմբերի 13-ի Եվրոպական կոնվենցիան և «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» 1977 թվականի հունվարի 27-ի Եվրոպական կոնվենցիան: Սկանդինավյան պետություններն ունեն էքստրադիցիայի մասին օրենքներ՝ նույն բառացի ձևակերպումներով,

⁽¹⁾ ՊՏ C 332 E, 27.11.2001 թ., էջ 305:

⁽²⁾ 2002 թվականի հունվարի 9-ի եզրակացություն (պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):

⁽³⁾ ՊՏ C 12 E, 15.01.2001 թ., էջ 10:

4) բացի այդ, անդամ պետությունների միջև համապատասխանեցվել և Միության «acquis»-ի մաս են կազմում հետևյալ երեք կոնվենցիաները, որոնք մասամբ կամ ամբողջությամբ անդրադառնում են էքստրադիցիայի հարցերին. 1990 թվականի հունիսի 19-ի անդամ պետությունների ընդհանուր սահմաններում ստուգումների աստիճանական վերացման մասին 1985 թվականի հունիսի 14-ի Շենգենյան համաձայնագիրը կիրարկող կոնվենցիան⁽⁴⁾ (այդ կոնվենցիայի մասնակից պետությունների միջև հարաբերությունների մասով), Եվրոպական միության անդամ պետությունների միջև էքստրադիցիայի պարզեցված ընթացակարգի մասին 1995 թվականի մարտի 10-ի կոնվենցիան⁽⁵⁾ և Եվրոպական միության անդամ պետությունների միջև էքստրադիցիայի վերաբերյալ 1996 թվականի սեպտեմբերի 27-ի կոնվենցիան⁽⁶⁾,

5) Միությունն ազատության, անվտանգության և արդարադատության տարածք դարձնելու նպատակով անդամ պետությունների միջև էքստրադիցիան (extradition) վերանում է, և փոխարենը դատական մարմինների միջև ներդրվում է հանձնման (surrender) համակարգ: Ավելին, քրեական պատիժների ի կատար ածման կամ քրեական հետապնդման նպատակով դատապարտյալների կամ կասկածյալների հանձնման նոր պարզեցված համակարգի ներդրման շնորհիվ հնարավոր է դառնում խուսափել էքստրադիցիայի ներկա ընթացակարգերում առկա բարդություններից և հնարավոր ձգձգումներից: Անդամ պետությունների միջև մինչ օրս գոյություն ունեցող ավանդական համագործակցային հարաբերությունները պետք է փոխարինվեն ազատության, անվտանգության և արդարադատության տարածքում քրեական գործերով դատական որոշումների՝ այդ թվում և նախքան դատապարտումը կայացվող, և վերջնական որոշումների ազատ տեղաշարժի համակարգով,

6) սույն Շրջանակային որոշմամբ նախատեսված՝ ձերբակալման մասին եվրոպական որոշումն առաջին կոնկրետ միջոցն է քրեական իրավունքի ոլորտում փոխադարձ ճանաչման սկզբունքն իրագործելու ուղղությամբ, որը Եվրոպական խորհուրդն անվանել է դատական համագործակցության «անկյունաքար»,

7) հաշվի առնելով, որ «Էքստրադիցիայի մասին» 1957 թվականի դեկտեմբերի 13-ի եվրոպական կոնվենցիայի հիման վրա կառուցված բազմակողմ էքստրադիցիայի համակարգը փոխարինելու նպատակը բավարար չափով չի կարող իրագործվել անդամ պետությունների միակողմանի գործողությունների միջոցով, սակայն, պայմանավորված լինելով դրա մասշտաբով և ազդեցությամբ, կարող է ավելի լավ իրագործվել Միության մակարդակով, Խորհուրդը կարող է միջոցներ ձեռնարկել Եվրոպական միության մասին համաձայնագրի 2-րդ հոդվածով և Եվրոպական համայնքի հիմնադրման մասին համաձայնագրի 5-րդ հոդվածով նախատեսված լրացուցչության (subsidiarity) սկզբունքին համապատասխան: Նշված 5-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքի համաձայն՝ սույն Շրջանակային որոշումը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է վերը նշված նպատակին հասնելու համար,

8) ձերբակալման մասին եվրոպական որոշման ի կատար ածման մասին որոշումները պետք է բավարար վերահսկողության ենթարկվեն, ինչը նշանակում է, որ պահանջվող անձի ձերբակալման վայրի անդամ պետության դատական մարմինը պետք է կայացնի տվյալ անձին հանձնելու մասին որոշումը,

(4) ՊՏ L 239, 22.09.2000 թ., էջ 19:

(5) ՊՏ C 78, 30.03.1995 թ., էջ 2:

(6) ՊՏ C 313, 13.10.1996 թ., էջ 12:

9) ձերբակալման մասին եվրոպական որոշումն ի կատար ածելու գործում կենտրոնական մարմինների դերը պետք է սահմանափակվի գործնական ու վարչական աջակցությամբ,

10) ձերբակալման մասին եվրոպական որոշման մեխանիզմը հիմնված է անդամ պետությունների միջև վստահության բարձր մակարդակի վրա: Դրա իրականացումը կարող է կասեցվել միայն անդամ պետություններից որևէ մեկի կողմից Եվրոպական միության մասին համաձայնագրի հոդված 6«1»-ով նախատեսված սկզբունքների լուրջ և բազմակի խախտումների դեպքում, որոնք որոշում է Խորհուրդը՝ նշված Համաձայնագրի հոդված 7«1»-ով նախատեսված կարգով, և որոնց դեպքում առաջանում են նույն Համաձայնագրի հոդված 7«2»-ով նախատեսված հետևանքները,

11) անդամ պետությունների միջև հարաբերություններում ձերբակալման մասին եվրոպական որոշումը պետք է փոխարինի էքստրադիցիային վերաբերող մինչ այժմ գոյություն ունեցած բոլոր փաստաթղթերը, ներառյալ Շենգենյան համաձայնագիրը կիրարկող կոնվենցիայի III գլխի դրույթները, որոնք վերաբերում են էքստրադիցիային,

12) սույն Շրջանակային որոշման մեջ հարգվում են Եվրոպական միության մասին համաձայնագրի 6-րդ հոդվածով ամրագրված և Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիայում⁽¹⁾ հատկապես դրա VI գլխում արտացոլված հիմնարար իրավունքներն ու սկզբունքները: Սույն Շրջանակային որոշման որևէ դրույթ չի կարող մեկնաբանվել որպես անձի հանձնումը մերժելու արգելք, եթե տվյալ անձի վերաբերյալ կայացվել է ձերբակալման մասին եվրոպական որոշում, և, եթե օբյեկտիվ գործոնների հիման վրա պատճառներ կան կարծելու, որ նշված որոշումը կայացվել է անձին՝ իր սեռի, ռասայի, կրոնի, էթնիկական ծագման, քաղաքացիության, լեզվի, քաղաքական համոզմունքների կամ սեռական կողմնորոշման հիմքով պատժելու կամ հետապնդելու համար, կամ որ թվարկված պատճառներից որևէ մեկի հիմքով տվյալ անձի վիճակը կարող է դառնալ նվազ բարենպաստ:

Սույն Շրջանակային որոշումն անդամ պետություններին չի արգելում կիրառել իրենց սահմանադրական նորմերը, որոնք վերաբերում են պատշաճ իրավական ընթացակարգին, միավորումներ կազմելու ազատությանը, մամուլի ազատությանը և այլ լրատվամիջոցներով արտահայտվելու ազատությանը,

13) որևէ անձ չպետք է տեղափոխվի, վտարվի կամ էքստրադիցիայի ենթարկվի այնպիսի պետություն, որտեղ լուրջ վտանգ կա, որ նրան կենթարկեն մահապատժի, խոշտանգման կամ այլ անմարդկային, կամ նվաստացնող վերաբերմունքի, կամ պատժի,

14) քանի որ բոլոր անդամ պետությունները վավերացրել են «Անհատական տվյալների ավտոմատացված մշակման շրջանակներում անհատի պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի 1981 թվականի հունվարի 28-ի կոնվենցիան, սույն Շրջանակային որոշման իրագործման համատեքստում մշակվող անհատական տվյալները պետք է պաշտպանվեն նշված կոնվենցիայի սկզբունքներին համապատասխան:

ԸՆԴՈՒՆԵՑ ՀԵՏԵՎՅԱԼ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ.

⁽¹⁾ OJ C 364, 18.12.2000 թ., էջ 1:

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐ

Հոդված 1

Ձերբակալման մասին եվրոպական որոշման սահմանումը և այն կատարելու պարտավորությունը

1. Ձերբակալման մասին եվրոպական որոշումը դատական որոշում է՝ ընդունված որևէ անդամ պետության կողմից՝ նպատակ ունենալով ապահովել մեկ այլ անդամ պետության կողմից պահանջվող անձի ձերբակալումը և հանձնումը՝ այդ անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու կամ ազատագրկման հետ կապված պատիժ կամ կալանավորման մասին որոշում ի կատար ածելու նպատակով:

2 Ձերբակալման մասին ցանկացած եվրոպական որոշում անդամ պետությունները կատարում են փոխադարձ ճանաչման սկզբունքի հիման վրա՝ սույն Շրջանակային որոշման դրույթներին համապատասխան:

3. Սույն Շրջանակային որոշումը չի փոփոխում Եվրոպական միության մասին համաձայնագրի 6-րդ հոդվածով ամրագրված հիմնարար իրավունքները և հիմնարար իրավական սկզբունքները հարգելու պարտավորությունը:

Հոդված 2

Ձերբակալման մասին եվրոպական որոշման գործողության ոլորտը

1. Ձերբակալման մասին եվրոպական որոշում կարող է կայացվել այն արարքների համար, որոնց համար որոշումը ընդունած անդամ պետության իրավունքով նախատեսված է առնվազն 12 ամիս ժամկետով ազատագրկման հետ կապված պատիժ կամ կալանք, իսկ եթե արդեն կայացվել է դատավճիռ կամ կալանավորման մասին որոշում՝ առնվազն 4 ամսով ազատագրկում կամ կալանք նախատեսելու դեպքում:

2. Հետևյալ հանցագործությունները, ինչպես դրանք սահմանված են որոշումը ընդունած անդամ պետության իրավունքով, և եթե որոշում կայացնող անդամ պետությունում դրանց համար նախատեսված պատիժը չի գերազանցում առնվազն երեք տարի ժամկետով ազատագրկման հետ կապված պատիժը կամ կալանքը՝ սույն Շրջանակային որոշման դրույթներին համապատասխան, առանց նույն արարքի համար կրկին քրեական պատասխանատվության ենթարկվելու հանգամանքը պարզելու անհրաժեշտության, ձերբակալման մասին եվրոպական որոշման համաձայն անձին հանձնելու պարտավորություն են առաջացնում՝

- անդամություն հանցավոր համագործակցությունում.
- ահաբեկչություն.
- մարդկանց առևտուր.
- երեխաների սեռական շահագործում և մանկական պոռնոգրաֆիա.
- թմրադեղերի և հոգեներգործուն նյութերի անօրինական առևտուր.
- զենքի, զինամթերքի և պայթուցիկ նյութերի անօրինական առևտուր.
- կոռուպցիա.

- կեղծում, ներառյալ այնպիսի, որը շոշափում է Եվրոպական համայնքների ֆինանսական շահերը՝ «Եվրոպական համայնքների ֆինանսական շահերի պաշտպանության մասին» 1995 թվականի հուլիսի 26-ի կոնվենցիայի իմաստով.
- հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացում.
- կեղծ փողեր, այդ թվում՝ եվրո պատրաստելը.
- համակարգչային հանցագործություններ.
- բնապահպանական հանցագործություններ, ներառյալ վտանգված կենդանական և բուսական տեսակների ապօրինի առևտուր.
- չթույլատրված մուտքի և բնակության օժանդակություն.
- սպանություն, ծանր մարմնական վնասվածք.
- մարդու օրգանների և հյուսվածքների անօրինական առևտուր.
- առևանգում, ազատությունից ապօրինի զրկել և պատանդ վերցնել.
- ռասիզմ և քսենոֆոբիա.
- ավազակություն՝ կազմակերպված խմբի կողմից կամ զենքի գործադրմամբ.
- մշակութային բարիքների, այդ թվում՝ հնաժառանգ իրերի և արվեստի ստեղծագործությունների անօրինական առևտուր.
- խարդախություն.
- բանդիտիզմ և շորթում.
- ապրանքների նմանակում և կեղծում.
- վարչական փաստաթղթերի կեղծում և առևտուր.
- վճարային միջոցների կեղծում.
- հորմոնային նյութերի և աճը խթանող այլ միջոցների անօրինական առևտուր.
- միջուկային կամ ռադիոակտիվ նյութերի անօրինական առևտուր.
- հափշտակված տրանսպորտային միջոցների առևտուր.
- բռնաբարություն.
- հրկիզում.
- միջազգային քրեական դատարանի իրավասությանը վերապահված հանցագործություններ.
- օդանավերի/նավերի զավթում.
- սաբոտաժ:

3. Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ, Եվրոպական միության մասին համաձայնագրի հոդված 39«1»-ով նախատեսված պայմաններով Եվրոպական խորհրդարանի հետ խորհրդակցելուց հետո, միաձայն որոշում կայացնել վերը նշված 2-րդ պարբերությունում զետեղված ցանկում հանցագործությունների այլ տեսակներ ավելացնելու մասին: Խորհուրդը, հոդված 34«3»-ի համաձայն Հանձնաժողովի ներկայացրած զեկույցի համատեքստում, պարզում է ցանկը ընդլայնելու կամ փոփոխելու նպատակահարմարությունը:

4. Վերը նշված 2-րդ պարբերությամբ նախատեսվածից բացի այլ հանցագործությունների դեպքում հանձնում իրականացնելու համար որպես պայման կարող է ներկայացվել այն, որ գործողությունները, որոնց համար կայացվել է ձերբակալման մասին եվրոպական որոշումը, հանցագործություն համարվեն ի կատար ածող անդամ պետության իրավունքի համաձայն՝ անկախ հանցակազմի տարրերից կամ դրա նկարագրությունից:

Հոդված 3

Ձերբակալման մասին եվրոպական որոշումը չկատարելու պարտադիր հիմքերը

Ի կատար ածող անդամ պետության դատական մարմինը (այսուհետ՝ «ի կատար ածող դատական մարմին») պարտավոր է հրաժարվել ձերբակալման մասին եվրոպական որոշման ի կատար ածումից հետևյալ դեպքերում՝

1. եթե հանցագործությունը, որի հիման վրա կայացվել է ձերբակալման մասին որոշումը, ենթակա է համաներման կատարող անդամ պետությունում, եթե վերջինս, իր քրեական իրավունքի համաձայն, հանցագործությունը հետապնդելու իրավագործություն ուներ.
2. եթե ի կատար ածող դատական մարմինն տեղեկացնում են, որ տվյալ անձի վերաբերյալ վերջնական դատավճիռ է կայացվել որևէ անդամ պետությունում նույն արարքների համար՝ պայմանով, որ եթե պատիժ է նշանակվել, անձը պետք է պատիժը կրած լինի կամ տվյալ պահին կրելիս լինի կամ պատիժը նշանակող անդամ պետության իրավունքի համաձայն այլևս ենթակա չլինի պատիժը կրելուն.
3. եթե անձը, որի վերաբերյալ ձերբակալման մասին եվրոպական որոշում է կայացվել, ի կատար ածող պետության իրավունքի համաձայն իր տարիքի պատճառով չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել այն արարքների համար, որոնց հիման վրա կայացվել է ձերբակալման մասին որոշումը:

Հոդված 4

Ձերբակալման մասին եվրոպական որոշումը չկատարելու ոչ պարտադիր հիմքերը

Ի կատար ածող դատական մարմինը կարող է հրաժարվել ձերբակալման մասին եվրոպական որոշումն ի կատար ածելուց՝

1. եթե հոդված 2«4»-ում նշված դեպքերից որևէ մեկի առկայության դեպքում արարքը, որի վրա հիմնված է ձերբակալման մասին եվրոպական որոշումը, հանցագործություն չէ՝ համաձայն ի կատար ածող անդամ պետության իրավունքի. այնուամենայնիվ, հարկերի, տուրքերի, մաքսային վճարների և արտարժույթի պարագայում ձերբակալման մասին եվրոպական որոշման ի կատար ածումը չի մերժվում այն հիմքով, որ ի կատար ածող անդամ պետության իրավունքը չի սահմանում նույն տեսակի հարկեր, տուրքեր կամ հարկերի, տուրքերի, մաքսային վճարների և արտարժույթի վերաբերյալ նորմեր, որոնք նախատեսված են որոշումը կայացրած անդամ պետության իրավունքով.
2. եթե անձը, որի վերաբերյալ կայացվել է ձերբակալման մասին եվրոպական որոշում, ի կատար ածող անդամ պետությունում քրեական հետապնդման է ենթարկվում նույն արարքի համար, որի հիման վրա կայացվել է ձերբակալման մասին եվրոպական որոշումը.
3. եթե ի կատար ածող անդամ պետության դատական մարմինները որոշում են կայացրել քրեական ձերբակալման մասին եվրոպական որոշման հիմքում ընկած հանցագործության վերաբերյալ քրեական հետապնդում չիրականացնելու կամ վարույթը կարճելու մասին, կամ, եթե

պահանջվող անձի վերաբերյալ նույն արարքների համար որևէ անդամ պետությունում կայացվել է վերջնական որոշում, որը բացառում է վարույթի շարունակումը,

4. եթե պահանջվող անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելը կամ պատիժ նշանակելը ի կատար ածող անդամ պետության իրավունքով անհնարին է վաղեմության ժամկետները լրանալու պատճառով, և տվյալ անդամ պետությունը իր քրեական իրավունքի համաձայն իրավագործություն ունի այդ արարքների նկատմամբ.

5. եթե ի կատար ածող դատական մարմինը տեղեկացվում է, որ պահանջվող անձի նկատմամբ նույն արարքների համար վերջնական որոշում է կայացվել որևէ երրորդ պետությունում՝ պայմանով, որ եթե պատիժ է նշանակվել, անձը կրել է պատիժը կամ կրում է տվյալ պահին կամ պատիժը նշանակող պետության իրավունքի համաձայն՝ այն այլևս ենթակա չէ կատարման,

6. եթե ձերբակալման մասին եվրոպական որոշումը կայացվել է ազատագրված հետ կապված պատիժ կամ կալանավորման մասին որոշում ի կատար ածելու նպատակով, երբ պահանջվող անձը գտնվում է ի կատար ածող անդամ պետությունում կամ վերջինիս քաղաքացին է կամ ռեզիդենտը, և եթե այդ պետությունը պարտավորվում է, իր ներպետական իրավունքի համաձայն, ի կատար ածել ազատագրված հետ կապված պատիժը կամ կալանավորման մասին որոշումը.

7. եթե ձերբակալման մասին եվրոպական որոշումը վերաբերում է այնպիսի հանցագործությունների, որոնք՝

ա) ի կատար ածող անդամ պետության իրավունքի համաձայն համարվում են հանցագործություններ, որոնք ամբողջությամբ կամ մասամբ կատարվել են ի կատար ածող անդամ պետության տարածքում կամ նման տարածք համարվող վայրում, կամ

բ) կատարվել են որոշում կայացրած անդամ պետության տարածքից դուրս, և ի կատար ածող անդամ պետության իրավունքը թույլ չի տալիս այդ հանցագործությունների վերաբերյալ քրեական հետապնդում իրականացնել, եթե դրանք կատարվել են իր տարածքից դուրս:

Հոդված 5

Որոշում կայացնող անդամ պետության կողմից կոնկրետ գործերով տրվող երաշխիքները

Ձերբակալման մասին եվրոպական որոշման կատարումն ի կատար ածող դատական մարմինը կարող է, դրա անդամ պետության իրավունքի համաձայն, պայմանավորել հետևյալով՝

1. եթե ձերբակալման մասին եվրոպական որոշումը կայացվել է անձի բացակայությամբ (in absentia) կայացված որոշմամբ նշանակված պատիժը կամ կալանավորման մասին որոշումն ի կատար ածելու նպատակով, և եթե տվյալ անձը դատակոչի չի ենթարկվել և այլ կերպ չի տեղեկացվել դատական նիստի օրվա և վայրի մասին, ինչը հանգեցրել է նրա բացակայությամբ որոշման կայացման, ապա նրա հանձնումը կարող է պայմանավորվել որոշում կայացնող դատական մարմնի կողմից այնպիսի երաշխիքի տրամադրմամբ, որը բավարար է համարվում՝

երաշխավորելու տվյալ անձին, որ նա հնարավորություն կունենա որոշում կայացնող անդամ պետությունում դիմել գործի վերաքննության և ներկա գտնվել դատավճռի կայացման ժամանակ.

2. Եթե հանցագործության համար, որի հիման վրա կայացվել է ձերբակալման մասին եվրոպական որոշումը, նախատեսված է ազատագրկման հետ կապված ցմահ պատիժ՝ որոշակի ժամկետով կամ ցմահ կալանք, ապա այդ որոշումն ի կատար ածելու համար կարող է կիրառվել նախապայման, որի համաձայն որոշում կայացնող անդամ պետությունը պետք է իր իրավական համակարգում ունենա նշանակված պատժի կամ կիրառված միջոցի վերանայում նախատեսող դրույթներ՝ միջնորդության հիման վրա կամ առնվազն պատժի 20 տարին կրելուց հետո, կամ ներման միջնորդության հնարավորություն նախատեսող դրույթներ, որին անձը պետք է իրավունք ունենա դիմել որոշում կայացնող անդամ պետության իրավունքի կամ պրակտիկայի համաձայն՝ նպատակ ունենալով հասնել տվյալ պատժի չկատարմանը.

3. այն դեպքում, երբ անձը, որի վերաբերյալ կայացվել է ձերբակալման մասին եվրոպական որոշում նրա նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով, ի կատար ածող անդամ պետության քաղաքացի է կամ ռեզիդենտ, ապա նրան հանձնելու համար կարող է կիրառվել նախապայման, որի համաձայն ցուցմունք տալուց հետո անձը պետք է վերադարձվի ի կատար ածող անդամ պետություն, որպեսզի այնտեղ կրի որոշում կայացնող անդամ պետությունում անձի նկատմամբ սահմանված ազատագրկման հետ կապված պատիժը կամ կալանքը:

Հոդված 6

Իրավասու դատական մարմինները որոշելը

1. Որոշում կայացնող դատական մարմինը որոշում կայացնող անդամ պետության դատական մարմինն է, որն այդ պետության իրավունքի համաձայն իրավասու է ձերբակալման մասին եվրոպական որոշում կայացնել:

2. Ի կատար ածող դատական մարմինը ի կատար ածող անդամ պետության դատական մարմինն է, որն այդ պետության իրավունքի համաձայն իրավասու է ի կատար ածել ձերբակալման մասին եվրոպական որոշումը:

3. Յուրաքանչյուր անդամ պետություն պարտավոր է Խորհրդի գլխավոր քարտուղարությանը տեղեկացնել իր իրավունքի համաձայն իրավասու դատական մարմնի մասին:

Հոդված 7

Կենտրոնական մարմինն դիմելը

1. Յուրաքանչյուր անդամ պետություն կարող է նշանակել կենտրոնական մարմին կամ, եթե այդ պետության իրավական համակարգը նախատեսում է՝ մեկից ավելի կենտրոնական մարմիններ, որը կամ որոնք կաջակցեն իրավասու դատական մարմիններին:

2. Անդամ պետությունը կարող է, իր ներքին դատական համակարգի կազմակերպման արդյունքում նման անհրաժեշտություն առաջանալու դեպքում, իր կենտրոնական մարմնի կամ

մարմինների վրա դնել ձերբակալման մասին եվրոպական որոշումների վարչական փոխանցման և ստացման, ինչպես նաև դրա հետ կապված ցանկացած այլ պաշտոնական նամակագրության պատասխանատվությունը:

Անդամ պետությունը, որը ցանկանում է օգտվել սույն հոդվածով նախատեսված հնարավորություններից, Խորհրդի գլխավոր քարտուղարությանը տեղեկություններ է հաղորդում նշանակված կենտրոնական մարմնի կամ մարմինների մասին: Որոշում կայացնող անդամ պետության բոլոր մարմինները կաշկանդված են այդ տեղեկություններով:

Հոդված 8

Ձերբակալման մասին եվրոպական որոշման ձևը և բովանդակությունը

1. Ձերբակալման մասին եվրոպական որոշումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝ շարադրված հավելվածում նշված ձևով՝

ա) պահանջվող անձի ինքնությունը և քաղաքացիությունը.

բ) որոշում կայացնող դատական մարմնի անվանումը, հասցեն, հեռախոսի և ֆաքսի համարներն ու էլեկտրոնային փոստի հասցեն.

գ) 1-ին և 2-րդ հոդվածների գործողության ոլորտի մեջ մտնող՝ ի կատար ածման ենթակա դատավճռի, ձերբակալման մասին որոշման կամ ի կատար ածման ենթակա և նույն գործողությունն ունեցող դատական այլ որոշման կայացման փաստը հիմնավորող ապացույցներ.

դ) հանցագործության բնույթը և իրավաբանական որակումը, հատկապես 2-րդ հոդվածի առումով.

ե) հանցագործության փաստական հանգամանքների նկարագրությունը՝ ներառյալ դրա կատարման ժամանակը, վայրը և դրանում պահանջվող անձի մասնակցության աստիճանը.

զ) նշանակված պատիժը, եթե առկա է վերջնական դատավճիռ, կամ որոշում կայացնող անդամ պետության իրավունքով տվյալ իրավախախտման համար նախատեսված պատիժների միջակայքը և տեսակները.

է) հնարավորության դեպքում, տեղեկություններ հանցագործության այլ հետևանքների մասին:

2. Ձերբակալման մասին եվրոպական որոշումը պետք է թարգմանված լինի ի կատար ածող անդամ պետության պաշտոնական լեզվով կամ պաշտոնական լեզուներից մեկով: Ցանկացած անդամ պետություն կարող է, սույն Շրջանակային որոշման ընդունման ժամանակ կամ դրանից հետո, Խորհրդի գլխավոր քարտուղարությանն ուղարկվող հայտարարության մեջ նշել իր պատրաստակամությունը՝ ընդունելու Եվրոպական համայնքի կառույցների պաշտոնական լեզուներից մեկով կամ մի քանիսով կատարված թարգմանությունը:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՆՁՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Հոդված 9

Ձերբակալման մասին եվրոպական որոշման փոխանցումը

1. Երբ պահանջվող անձի գտնվելու վայրը հայտնի է, որոշում կայացնող դատական մարմինը կարող է ձերբակալման մասին եվրոպական որոշումը փոխանցել անմիջականորեն ի կատար ածող դատական մարմնին:

2. Որոշում կայացնող դատական մարմինը կարող է, ցանկացած պարագայում, պահանջվող անձի վերաբերյալ նախազգուշացում (alert) հրապարակել Շենգենյան տեղեկատվական համակարգում (Schengen Information System):

3. Նման նախազգուշացումը գործում է «Ընդհանուր սահմաններին իրականացվող ստուգումների աստիճանական վերացման մասին» 1985 թվականի հունիսի 14-ի Շենգենյան համաձայնագիրը կիրարկող՝ 1990 թվականի հունիսի 19-ի կոնվենցիայի 95-րդ հոդվածի դրույթների համաձայն: Շենգենյան տեղեկատվական համակարգում հրապարակված նախազգուշացումը համարժեք է հոդված 8«1»-ով նախատեսված տեղեկություններով ուղեկցվող ձերբակալման մասին եվրոպական որոշմանը:

Որոշակի անցումային ժամանակահատվածի ընթացքում, մինչև Շենգենյան տեղեկատվական համակարգն ի վիճակի լինի փոխանցել 8-րդ հոդվածում նշված բոլոր տեղեկությունները, նախազգուշացումը հավասարեցվում է ձերբակալման մասին եվրոպական որոշմանը այնքան ժամանակ, քանի դեռ ի կատար ածող դատական մարմնից պատշաճ ձևով չի ստացվել դրա բնօրինակը:

Հոդված 10

Ձերբակալման մասին եվրոպական որոշման փոխանցման ընթացակարգի մանրամասները

1. Եթե որոշում կայացնող դատական մարմնին հայտնի չէ ի կատար ածող իրավասու դատական մարմինը, ապա այն պարտավոր է համապատասխան հարցումներ կատարել, այդ թվում՝ Եվրոպական դատական ցանցի (European Judicial Network)⁽¹⁾ համակարգողների (contact points) միջոցով, որպեսզի ստանա այդ տեղեկություններն ի կատար ածող անդամ պետությունից:

2. Որոշում կայացնող դատական մարմնի ցանկությամբ փոխանցումը կարող է կատարվել Եվրոպական դատական ցանցի հեռահաղորդակցության անվտանգ համակարգի միջոցով:

3. Եթե հնարավոր չէ օգտվել Շենգենյան տեղեկատվական համակարգի ծառայություններից, ապա որոշում կայացնող դատական մարմնին իրավասու է ձերբակալման մասին եվրոպական որոշումն փոխանցելու խնդրանքով դիմել Ինտերպոլին:

⁽¹⁾ Խորհրդի 1998 թ. հունիսի 29-ի թիվ 98/428/ԱՆԳ համատեղ որոշումը Եվրոպական դատական ցանց ստեղծելու մասին (ՊՏԼ 191, 7.07.1998թ., էջ 4):

4. Որոշում կայացնող դատական մարմինն իրավասու է ձերբակալման մասին եվրոպական որոշումն փոխանցել ցանկացած ապահով միջոցով, որից հնարավոր է ստանալ գրավոր արձանագրություններ այնպիսի պայմաններով, որոնք ի կատար ածող անդամ պետությանը թույլ կտան համոզվել դրա նույնականության մեջ:

5. Ձերբակալման մասին եվրոպական որոշման ի կատար ածման համար անհրաժեշտ փաստաթղթերի ուղարկման կամ նույնականության հետ կապված բոլոր դժվարությունները պետք է լուծվեն մասնակից դատական մարմինների միջև անմիջական շփումների կամ, անհրաժեշտության դեպքում, անդամ պետությունների կենտրոնական մարմինների ներգրավմամբ:

6. Եթե ձերբակալման մասին եվրոպական որոշում ստացող մարմինն իրավասու չէ դրա հիման վրա գործողություններ կատարել, այն ձերբակալման մասին եվրոպական որոշումն ինքնաբերաբար վերահասցեագրում է իր գտնվելու վայրի անդամ պետության իրավասու մարմինն՝ այդ մասին տեղեկացնելով որոշում կայացնող դատական մարմին:

Հոդված 11

Պահանջվող անձի իրավունքները

1. Պահանջվող անձի ձերբակալման դեպքում որոշումն ի կատար ածող իրավասու դատական մարմինը պարտավոր է, իր ներպետական իրավունքին համապատասխան, անձին տեղեկացնել ձերբակալման մասին եվրոպական որոշման և դրա բովանդակության, ինչպես նաև՝ որոշում կայացնող դատական մարմնին հանձնվելու՝ իր համաձայնությունը հայտնելու հնարավորության մասին:

2. Պահանջվող անձը, որը ձերբակալվել է՝ ձերբակալման մասին եվրոպական որոշումն ի կատար ածելու նպատակով, իրավասու է ստանալ պաշտպանի և թարգմանչի աջակցությունը՝ որոշումն ի կատար ածող անդամ պետության ներպետական իրավունքին համապատասխան:

Հոդված 12

Անձին կալանքի տակ պահելը

Ձերբակալման մասին եվրոպական որոշման հիման վրա անձի ձերբակալման դեպքում որոշումն ի կատար ածող դատական մարմինը ի կատար ածող անդամ պետության իրավունքի համաձայն որոշում է կայացնում պահանջվող անձին կալանքի տակ պահելու հարցի վերաբերյալ: Անձը կարող է ցանկացած պահի պայմանականորեն ազատ արձակվել որոշումն ի կատար ածող անդամ պետության ներպետական իրավունքի համաձայն՝ պայմանով, որ այդ անդամ պետության իրավասու մարմինը ձեռնարկի իր կողմից անհրաժեշտ համարվող բոլոր միջոցները՝ անձի փախուստը կանխելու ուղղությամբ:

Հոդված 13

Հանձնվելու համաձայնությունը

1. Եթե ձերբակալված անձը նշում է, որ ինքը համաձայն է հանձնվել, այդ համաձայնությունը և, անհրաժեշտության դեպքերում, հոդված 27«2»-ում նշված «արարքի որակման անփոփոխելիության մասին նորմով» (speciality rule) վերապահվող իրավունքից նրա արտահայտած հրաժարումը ներկայացվում է ի կատար ածող դատական մարմին՝ ի կատար ածող անդամ պետության ներպետական իրավունքին համապատասխան:

2. Յուրաքանչյուր անդամ պետություն ձեռնարկում է այն միջոցները, որոնք անհրաժեշտ են՝ ապահովելու համար, որ համաձայնությունը և, համապատասխան դեպքերում, սույն հոդվածի 1-ին պարբերությունում նշված հրաժարումն անձի կողմից արտահայտվել են կամավոր և հետևանքների լիարժեք իրազեկվածությամբ: Այդ նպատակով, պահանջվող անձն ունի պաշտպան ունենալու իրավունք:

3. Համաձայնությունը և, համապատասխան դեպքերում, սույն հոդվածի 1-ին պարբերությունում նշված հրաժարումը պետք է պաշտոնապես ամրագրվեն որոշումն ի կատար ածող անդամ պետության ներպետական իրավունքով նախատեսված կարգով:

4. Համաձայնությունը, որպես կանոն, չի կարող հետ վերցվել: Յուրաքանչյուր անդամ պետություն կարող է նախատեսել համաձայնությունը և, համապատասխան դեպքերում, հրաժարումը հետ վերցնելու իրավունք՝ իր ներպետական իրավունքի համաձայն կիրառվող կանոններին համապատասխան: Այդ դեպքում, համաձայնության օրվանից մինչև այն հետ վերցնելու օրն ընկած ժամանակահատվածը հաշվի չի առնվում՝ 17-րդ հոդվածով նախատեսված ժամկետային սահմանափակումները սահմանելիս: Անդամ պետությունը, որը ցանկանում է օգտվել այս հնարավորությունից, պարտավոր է այդ մասին տեղեկացնել Խորհրդի գլխավոր քարտուղարությանը սույն Շրջանակային որոշման ընդունման ժամանակ՝ նշելով այն ընթացակարգերը (ներառյալ դրանցում կատարվող փոփոխությունները), որոնց համաձայն հնարավոր է համաձայնությունը հետ վերցնել:

Հոդված 14

Պահանջվող անձի կողմից ցուցմունք տալը

Եթե ձերբակալված անձը համաձայն չէ 13-րդ հոդվածով նախատեսված կարգով իր հանձնմանը, նա իրավունք ունի ցուցմունքներ տալու որոշումն ի կատար ածող դատական մարմնին՝ որոշումն ի կատար ածող անդամ պետության իրավունքին համապատասխան:

Հոդված 15

Հանձնման վերաբերյալ որոշումը

1. Ի կատար ածող դատական մարմինը սույն Շրջանակային որոշմամբ սահմանված ժամկետներում և կարգով որոշում է անձի՝ հանձնման ենթակա լինելը:

2. Եթե որոշումն ի կատար ածող դատական մարմինը գտնում է, որ որոշում կայացնող անդամ պետության փոխանցած տեղեկությունները բավարար չեն հանձնման վերաբերյալ որոշում կայացնելու համար, ի կատար ածող դատական մարմինը պահանջում է անհրաժեշտ լրացուցիչ տեղեկությունների անհապաղ տրամադրումը, հատկապես 3-րդ, 4-րդ, 5-րդ և 8-րդ հոդվածների մասով, ինչպես նաև կարող է սահմանել դրանց ստացման ժամկետ՝ հաշվի առնելով 17-րդ հոդվածով նախատեսված ժամկետները պահպանելու անհրաժեշտությունը:

3. Որոշում կայացնող դատական մարմինը կարող է ցանկացած պահի ցանկացած լրացուցիչ օգտակար տեղեկություններ փոխանցել ի կատար ածող դատական մարմնին:

Հոդված 16

Որոշումը մեկից ավելի հարցումների դեպքում

1. Եթե միննույն անձի համար ձերբակալման մասին եվրոպական որոշումներ են կայացրել երկու կամ ավելի անդամ պետություններ, ապա ի կատար ածման համար ձերբակալման մասին եվրոպական որոշումներից մեկի ընտրությունը կատարում է ի կատար ածող դատական մարմինը՝ հավուր պատշաճի հաշվի առնելով բոլոր հանգամանքները և, հատկապես, հանցագործությունների հարաբերական ծանրության աստիճանը և կատարման վայրը, ձերբակալման մասին եվրոպական որոշումների համապատասխան ամսաթվերը և այն, թե արդյոք որոշումը կայացվել է քրեական հետապնդում իրականացնելու, թե ազատագրվման հետ կապված պատիժ կամ կալանավորման մասին որոշում ի կատար ածելու համար:

2. Սույն հոդվածի 1-ին պարբերությունում նշված ընտրությունը կատարելիս, ի կատար ածող դատական մարմինը կարող է խորհրդատվության համար դիմել «Eurojust»-ին:⁽¹⁾

3. Ձերբակալման մասին եվրոպական որոշման և երրորդ պետության ներկայացրած՝ էքստրադիցիայի մասին խնդրանքի միջև հակասության դեպքում ձերբակալման մասին եվրոպական որոշման կամ էքստրադիցիայի գերակայության մասին որոշումը կայացնում է ի կատար ածող անդամ պետության իրավասու մարմինը՝ հավուր պատշաճի հաշվի առնելով բոլոր հանգամանքները, մասնավորապես՝ սույն հոդվածի 1-ին պարբերությամբ և կիրառվող կոնվենցիայով նախատեսված հանգամանքները:

4. Սույն հոդվածը չի սահմանափակում Միջազգային քրեական դատարանի կանոնադրությամբ նախատեսված անդամ պետությունների պարտավորությունները:

⁽¹⁾ Խորհրդի 2002 թ. փետրվարի 28-ի 2002/187/ՄՆԳ որոշումը ծանր հանցավորության դեմ պայքարը կատարելագործելու նպատակով «Eurojust»-ը ստեղծելու մասին (ՊՏԼ 63, 6.3.2002 թ., էջ 1):

Հոդված 17

Ձերբակալման մասին եվրոպական որոշումն ի կատար ածելու վերաբերյալ որոշման ընդունման ժամկետները և կարգը

1. Ձերբակալման մասին եվրոպական որոշումը քննվում և ի կատար է ածվում հրատապ կարգով:
2. Եթե պահանջվող անձը համաձայն է հանձնվել, ձերբակալման մասին եվրոպական որոշումն ի կատար ածելու մասին վերջնական որոշումը պետք է կայացվի համաձայնությունը տալուց հետո 10 օրվա ընթացքում:
3. Այլ դեպքերում ձերբակալման մասին եվրոպական որոշման ի կատար ածման մասին վերջնական որոշումը պետք է կայացվի պահանջվող անձին ձերբակալելուց հետո 60 օրվա ընթացքում:
4. Եթե, կոնկրետ դեպքերում, ձերբակալման մասին եվրոպական որոշումը չի կարող ի կատար ածվել սույն հոդվածի 2-րդ կամ 3-րդ պարբերություններով նախատեսված ժամկետներում, ի կատար ածող դատական մարմինը անհապաղ այդ մասին տեղեկացնում է որոշում կայացնող դատական մարմնին՝ նշելով ուշացման պատճառները: Նման պարագայում ժամկետները կարող են երկարաձգվել ևս 30 օրով:
5. Այնքան ժամանակ, քանի դեռ ի կատար ածող դատական մարմինը ձերբակալման մասին եվրոպական որոշման վերաբերյալ չի կայացրել վերջնական որոշում, այն ապահովում է անձի արդյունավետ հանձնման համար անհրաժեշտ նյութական պայմանների շարունակական կատարումը:
6. Ձերբակալման մասին եվրոպական որոշումն ի կատար ածելու ցանկացած մերժում պետք է պատճառաբանվի:
7. Եթե անդամ պետությունը բացառիկ հանգամանքներում ի վիճակի չէ պահպանել սույն հոդվածով նախատեսված ժամկետները, այն պարտավոր է այդ մասին տեղեկացնել «Eurojust»-ին՝ նշելով ձգձգման պատճառները: Բացի այդ, անդամ պետությունը, որը մի քանի անգամ ձգձգումների է հանդիպել մեկ այլ անդամ պետության կողմից ձերբակալման մասին եվրոպական որոշումների ի կատար ածման պրակտիկայում, պարտավոր է այդ մասին տեղեկացնել Խորհրդին՝ նպատակ ունենալով գնահատել անդամ պետությունների մակարդակում սույն Շրջանակային որոշման իրականացումը:

Հոդված 18

Որոշմանը նախորդող իրավիճակը

1. Եթե ձերբակալման մասին եվրոպական որոշումը կայացվել է քրեական հետապնդում իրականացնելու համար, ի կատար ածող դատական մարմինը պետք է.

ա) համաձայնի, որ պահանջվող անձից հարկավոր է ցուցմունք վերցնել՝ 19-րդ հոդվածի համաձայն.

բ) կամ համաձայնի պահանջվող անձի ժամանակավոր փոխանցմանը:

2. Ժամանակավոր փոխանցման պայմանները և տևողությունը որոշվում են կայացնող և ի կատար ածող դատական մարմինների փոխադարձ համաձայնությամբ:

3. Ժամանակավոր փոխանցման դեպքում անձը պետք է ի վիճակի լինի վերադառնալ ի կատար ածող անդամ պետություն՝ մասնակցելու հանձնման ընթացակարգի շրջանակներում ընթացող և իրեն վերաբերող լուումներին:

Հոդված 19

Որոշում կայացնելուց առաջ անձից ցուցմունքներ վերցնելը

1. Դատական մարմինը, պահանջող դատարանի անդամ պետության իրավունքի համաձայն նշանակված մեկ այլ անձի աջակցությամբ, ցուցմունք է վերցնում պահանջվող անձից:

2. Պահանջվող անձից ցուցմունքներ վերցվում են ի կատար ածող անդամ պետության իրավունքին և որոշում կայացնող ու ի կատար ածող դատական մարմինների միջև փոխադարձ համաձայնությամբ սահմանված պայմաններին համապատասխան:

3. Ի կատար ածող իրավասու դատական մարմինը կարող է լիազորել իր գտնվելու վայրի անդամ պետության մեկ այլ դատական մարմնի, որպեսզի վերջինս մասնակցի պահանջվող անձի կողմից ցուցմունք տալուն՝ սույն հոդվածի և սահմանված պայմանների պատշաճ կիրառությունն ապահովելու համար:

Հոդված 20

Արտոնությունները և անձեռնմխելիության իրավունքը

1. Եթե պահանջվող անձն օգտվում է ի կատար ածող անդամ պետության իրավազորության կամ անդամ պետությունում ի կատար ածման հետ կապված որևէ արտոնությունից կամ անձեռնմխելիությունից, 17-րդ հոդվածով սահմանված ժամկետների հաշվարկը չի սկսվում այնքան ժամանակ, մինչև ի կատար ածող դատական մարմինը չի տեղեկացվում արտոնությունից կամ անձեռնմխելիությունից հրաժարվելու փաստի մասին, և սկսվում է միայն այդ օրվանից:

Ի կատար ածող անդամ պետությունը ապահովում է արդյունավետ հանձնման համար անհրաժեշտ նյութական պայմանների բավարարումն այն ժամանակ, երբ անձն այլևս չի օգտվում նման արտոնությունից կամ անձեռնմխելիությունից:

2. Եթե արտոնությունից կամ անձեռնմխելիությունից զրկվելու լիազորությունը վերապահված է ի կատար ածող անդամ պետության որևէ իրավասու մարմնի, ի կատար ածող դատական մարմինը դիմում է վերջինիս՝ խնդրելով անհապաղ իրականացնել այդ լիազորությունը: Եթե արտոնությունից կամ անձեռնմխելիությունից զրկվելու լիազորությունը վերապահված է մեկ այլ

պետության որևէ մարմնի կամ որևէ միջազգային կազմակերպության, որոշում կայացնող դատական մարմինն է դիմում դրան այդ լիազորությունն իրականացնելու խնդրանքով:

Հոդված 21

Այլընտրանքային միջազգային պարտավորությունները

Սույն Շրջանակային որոշումը չի սահմանափակում ի կատար ածող անդամ պետության պարտավորություններն այն դեպքում, երբ պահանջվող անձն էքստրադիցիայի է ենթարկվել այդ անդամ պետություն որևէ երրորդ պետությունից, և եթե տվյալ անձը պաշտպանված է այն պայմանավորվածության՝ «արարքի որակման անփոփոխելիության մասին նորմի» վերաբերյալ դրույթներով, որի համաձայն նա էքստրադիցիայի է ենթարկվել: Ի կատար ածող անդամ պետությունը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի անհապաղ դիմի պահանջվող անձին էքստրադիցիայի ենթարկած պետությանը՝ ստանալու վերջինիս համաձայնությունն անձին այն անդամ պետությանը հանձնելու համար, որը կայացրել է ձերբակալման մասին եվրոպական որոշումը: 17-րդ հոդվածում նշված ժամկետների հաշվարկը չի սկսվում մինչև այն օրը, երբ սկսում են կիրառվել «արարքի որակման անփոփոխելիության մասին նորմերը»: Մինչև պահանջվող անձին էքստրադիցիայի ենթարկած պետության որոշումն ստանալը, ի կատար ածող անդամ պետությունը պարտավոր է ապահովել անձի արդյունավետ հանձնման համար անհրաժեշտ նյութական պայմանների շարունակական կատարումը:

Հոդված 22

Որոշման մասին ծանուցումը

Ի կատար ածող դատական մարմինը որոշում կայացնող դատական մարմնին անհապաղ ծանուցում է ձերբակալման մասին եվրոպական որոշման կապակցությամբ իրականացվելիք գործողության վերաբերյալ կայացված որոշման մասին:

Հոդված 23

Անձին հանձնելու ժամկետները

1. Պահանջվող անձը հանձնվում է որքան հնարավոր է շուտ՝ համապատասխան մարմինների միջև համաձայնեցված օրը:
2. Նա հանձնվում է ոչ ուշ, քան ձերբակալման մասին եվրոպական որոշումն ի կատար ածելու մասին վերջնական որոշումից 10 օր հետո:
3. Եթե որևէ անդամ պետության հսկողությունից դուրս գտնվող հանգամանքները խոչընդոտում են պահանջվող անձին 2-րդ պարբերությամբ նախատեսված ժամկետում հանձնելուն, ապա ի կատար ածող և որոշում կայացնող դատական մարմիններն անհապաղ կապվում են միմյանց հետ և համաձայնեցնում հանձնման նոր ամսաթիվ: Այդ պարագայում հանձնումը տեղի է ունենում նշված կարգով համաձայնեցված նոր ամսաթվից հետո 10 օրվա ընթացքում:

4. Բացառության կարգով, հանձնումը կարող է ժամանակավորապես հետաձգվել՝ պայմանավորված մարդասիրական լուրջ պատճառներով՝ օրինակ, եթե լուրջ հիմքեր կան կարծելու, որ հանձնումն ակնհայտորեն կվտանգեր պահանջվող անձի կյանքը կամ առողջությունը: Ձերբակալման մասին եվրոպական որոշումն ի կատար է ածվում այդ հիմքերի գոյությունը դադարելուն պես: Ի կատար ածող դատական մարմինն այդ մասին անհապաղ տեղեկացնում է որոշում կայացնող դատական մարմնին և համաձայնեցնում հանձնման նոր ամսաթիվը: Այդ դեպքում հանձնումը տեղի է ունենում նշված կարգով համաձայնեցված նոր ամսաթվից հետո 10 օրվա ընթացքում:

5. Սույն հոդվածի 2-4-րդ պարբերություններում նշված ժամկետները լրանալուց հետո անձը, եթե դեռ պահվում է կալանքի տակ, ազատ է արձակվում:

Հոդված 24

Հետաձգված կամ պայմանական հանձնում

1. Ի կատար ածող դատական մարմինը կարող է, ձերբակալման մասին եվրոպական որոշումն ի կատար ածելու մասին որոշում կայացնելուց հետո, հետաձգել պահանջվող անձի հանձնումը, որպեսզի հնարավոր լինի նրա նկատմամբ քրեական հետապնդում իրականացնել ի կատար ածող անդամ պետությունում կամ, եթե նա արդեն դատապարտվել է, ապա, որպեսզի նա ի կատար ածող անդամ պետության տարածքում պատիժ կրի որևէ իրավախախտման համար, որը չի կարող լինել նույնը, ինչ նշված է ձերբակալման մասին եվրոպական որոշման մեջ:

2. Հանձնումը հետաձգելու փոխարեն, ի կատար ածող դատական մարմինը կարող է պահանջվող անձին ժամանակավորապես հանձնել որոշում կայացնող անդամ պետությանը՝ որոշում կայացնող և ի կատար ածող դատական մարմինների միջև փոխադարձ համաձայնությամբ նախատեսված պայմաններով: Համաձայնությունը պետք է լինի գրավոր, իսկ այդ պայմանները պարտադիր՝ որոշում կայացնող անդամ պետության բոլոր մարմինների համար:

Հոդված 25

Տարանցիկ տեղափոխումը

1. Յուրաքանչյուր անդամ պետություն՝ բացառությամբ, երբ ազատագրկման հետ կապված պատիժ կամ կալանավորման մասին որոշում ի կատար ածելու նպատակով քաղաքացու կամ ռեզիդենտի տարանցիկ տեղափոխման խնդրանք ստանալու դեպքում տվյալ պետությունն օգտվում է հրաժարվելու հնարավորությունից, պարտավոր է թույլատրել հանձնման ենթարկվող՝ պահանջվող անձի տարանցիկ տեղափոխումն իր տարածքով, եթե տվյալ պետությանը տրամադրվել են հետևյալ տեղեկությունները՝

ա) այն անձի ինքնությունը և քաղաքացիությունը, որի վերաբերյալ կայացվել է ձերբակալման մասին եվրոպական որոշումը.

բ) ձերբակալման մասին եվրոպական որոշման առկայությունը.

զ) իրավախախտման բնույթը և իրավական դասակարգումը.

դ) իրավախախտման փաստական հանգամանքների նկարագրությունը, այդ թվում՝ ամսաթիվը և կատարման վայրը:

Եթե անձը, որի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով կայացվել է ձերբակալման մասին եվրոպական որոշում, տարանցիկ տեղափոխման անդամ պետության քաղաքացի է կամ ռեզիդենտ, նրա տարանցիկ տեղափոխման համար կարող է պայման սահմանվել, որպեսզի տվյալ անձին, ցուցմունք տալուց հետո, վերադարձնեն տարանցիկ տեղափոխման անդամ պետություն՝ այնտեղ կրելու որոշում կայացնող անդամ պետությունում նրա նկատմամբ նշանակված՝ ազատագրկման հետ կապված պատիժը կամ կալանքը:

2. Յուրաքանչյուր անդամ պետություն նշանակում է իրավասու մարմին, որը պատասխանատու է տարանցիկ տեղափոխման վերաբերյալ հարցումները և անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես նաև ցանկացած այլ պաշտոնական նամակագրություն ստանալու համար, որը վերաբերում է տարանցիկ տեղափոխման հարցումներին: Անդամ պետությունները այդ նշանակման մասին տեղեկացնում են Խորհրդի գլխավոր քարտուղարությանը:

3. Տարանցիկ տեղափոխման վերաբերյալ հարցումը և սույն հոդվածի 1-ին պարբերությունում նշված տեղեկությունները կարող են հասցեագրվել սույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն նշանակված մարմնին ցանկացած միջոցով, որով հնարավոր է գրավոր արձանագրություն ստանալ: Տարանցիկ տեղափոխման անդամ պետությունն իր որոշման մասին ծանուցում է սույն ընթացակարգով:

4. Սույն Շրջանակային որոշումը չի կիրառվում օդային տեղափոխման դեպքում, երբ չվերթի ժամանակացույցով կանգառ նախատեսված չէ: Այդուհանդերձ, եթե տեղի է ունենում չնախատեսված վայրէջք, ապա որոշում կայացնող անդամ պետությունը սույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն նշանակված մարմնին տրամադրում է սույն հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված տեղեկությունները:

5. Եթե տարանցիկ տեղափոխումը վերաբերում է որևէ անձի, ով երրորդ պետության կողմից էքստրադիցիայի է ենթարկվում որևէ անդամ պետություն, ապա սույն հոդվածը կիրառվում է համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*): Մասնավորապես, «ձերբակալման մասին եվրոպական որոշում» արտահայտությունը փոխարինվում է «էքստրադիցիայի վերաբերյալ հարցում» արտահայտությամբ:

ԳԼՈՒԽ 3

ՀԱՆՁՆՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հոդված 26

Ի կատար ածող անդամ պետությունում կրած կալանքի ժամկետի հաշվակցումը

1. Որոշում կայացնող անդամ պետությունը ձերբակալման մասին եվրոպական որոշման կատարումից բխող կալանքի բոլոր ժամկետները հաշվակցում է որոշում կայացնող անդամ պետությունում ազատագրկման հետ կապված պատժի կամ կալանքի ընդհանուր ժամկետի մեջ:

2. Այդ նպատակով, ձերբակալման մասին եվրոպական որոշման հիման վրա պահանջվող անձի կալանքի տևողության մասին բոլոր տեղեկությունները ի կատար ածող դատական մարմնի կամ 7-րդ հոդվածի համաձայն նշանակված կենտրոնական մարմնի կողմից, հանձնման պահին, փոխանցվում են որոշում կայացնող դատական մարմնին:

Հոդված 27

Այլ հանցագործությունների համար քրեական հետապնդում իրականացնելու հնարավորությունը

1. Յուրաքանչյուր անդամ պետություն կարող է Խորհրդի գլխավոր քարտուղարությանը ծանուցել այն մասին, որ նման կերպով ծանուցում տված այլ անդամ պետությունների հետ իր հարաբերություններում համարվում է, որ առկա է համաձայնություն քրեական հետապնդման, դատապարտման կամ կալանավորման համար, որի նպատակը նրան հանձնելուց առաջ կատարված հանցագործության համար ազատագրկման հետ կապված պատժի կամ կալանավորման մասին որոշման ի կատար ածումն է՝ բացառությամբ այն հանցագործության, որի համար նա հանձնվել է, եթե կոնկրետ դեպքում հանձնման մասին իր որոշման մեջ ի կատար ածող դատական մարմինը այլ բան չի նշում:

2. Բացառությամբ սույն հոդվածի 1-ին և 3-րդ պարբերություններում նշված դեպքերի՝ հանձնված անձը չի կարող քրեական հետապնդման ենթարկվել, դատապարտվել կամ այլ կերպ զրկվել իր ազատությունից այն հանցագործության համար, որը նա կատարել է նախքան իր հանձնումը՝ բացառությամբ այն հանցագործության, որի համար նա հանձնվել է:

3. Սույն հոդվածի 2-րդ պարբերությունը չի կիրառվում հետևյալ դեպքերի նկատմամբ՝

ա) անձը, հնարավորություն ունենալով հեռանալ այն անդամ պետության տարածքից, որին իրեն հանձնել են, չի հեռացել այդ տարածքից իր վերջնական ազատումից հետո 45 օրվա ընթացքում կամ այն լքելուց հետո կրկին վերադարձել է այդ տարածք.

բ) տվյալ հանցագործությունը չի պատժվում ազատագրկման հետ կապված պատժով կամ կալանավորման մասին որոշմամբ.

գ) քրեական վարույթի արդյունքում չի կիրառվում անձի ազատությունը սահմանափակող միջոց.

դ) անձը կարող է ենթարկվել ազատագրկման հետ չկապված պատժամիջոցի, մասնավորապես՝ ֆինանսական տուգանքի կամ դրա փոխարեն որևէ այլ միջոցի, նույնիսկ երբ այդ տուգանքը կամ միջոցը կարող են հանգեցնել նրա անձնական ազատության սահմանափակման.

ե) անձը համաձայն է հանձնվել, որը, համապատասխան դեպքերում, տեղի է ունենում 13-րդ հոդվածով նախատեսված՝ «արարքի որակման անփոփոխելիության մասին նորմից» բխող իրավունքից նրա հրաժարման հետ միաժամանակ.

զ) անձը, հանձնումից հետո, հստակորեն հրաժարվել է արարքի որակման անփոփոխելիության մասին նորմից բխող իր իրավունքից՝ իր հանձնումից առաջ կատարված որոշակի

հանցագործությունների համար: Հրաժարումը ներկայացվում է որոշում կայացնող անդամ պետության իրավասու դատական մարմիններին և ամրագրվում է այդ պետության ներպետական իրավունքին համապատասխան: Հրաժարումը կազմվում է այնպես, որպեսզի պարզ լինի, որ անձը հրաժարվել է կամավոր և հետևանքների լիարժեք իրազեկվածությամբ: Այդ առումով, անձը ունի պաշտպան ունենալու իրավունք:

Է) ի կատար ածող դատական մարմինը, որը հանձնել է անձին, տալիս է 4-րդ պարբերությամբ նախատեսված իր համաձայնությունը:

4. Համաձայնություն տալու վերաբերյալ հարցումը ներկայացվում է ի կատար ածող դատական մարմինն հոդված 8«1»-ում նշված տեղեկությունների և հոդված 8«2»-ում նշված կարգով կատարված թարգմանության հետ միասին: Համաձայնությունը տրվում է այն դեպքում, երբ հանցագործությունը, որի համար պահանջվում է համաձայնությունը, սույն Շրջանակային որոշման համաձայն այնպիսի հանցագործություն է, որի կատարողը ենթակա է հանձնման: Համաձայնությունը մերժվում է 3-րդ հոդվածում նշված հիմքերի առկայության դեպքում և կարող է մերժվել միայն 4-րդ հոդվածում նշված հիմքերի առկայության դեպքում: Որոշումը կայացվում է պահանջն ստանալուց հետո ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում:

5-րդ հոդվածում նշված դեպքերում, այդ հոդվածով նախատեսված երաշխիքները տալիս է որոշում կայացնող անդամ պետությունը:

Հոդված 28 **Հանձնումը կամ հետագա էքստրադիցիան**

1. Յուրաքանչյուր անդամ պետություն կարող է Խորհրդի գլխավոր քարտուղարությանը ծանուցել այն մասին, որ նման ծանուցում տված այլ անդամ պետությունների հետ իր հարաբերություններում համարվում է, որ առկա է որևէ անդամ պետության, բացառությամբ ի կատար ածող անդամ պետության, անձի հանձնումից առաջ կատարված հանցագործության համար ընդունված ձեռքարկման մասին եվրոպական որոշման համաձայն նրան հանձնելու համար անհրաժեշտ համաձայնությունը, եթե կոնկրետ դեպքում հանձնման մասին իր որոշման մեջ ի կատար ածող դատական մարմինն այլ բան չի նշում:

2. Ցանկացած պարագայում, անձը, ով հանձնվել է որոշում կայացնող անդամ պետությանը ձեռքարկման մասին եվրոպական որոշման համաձայն, կարող է առանց ի կատար ածող անդամ պետության համաձայնության հանձնվել որևէ այլ անդամ պետության նրա հանձնումից առաջ կատարված ցանկացած հանցագործության համար ընդունված ձեռքարկման մասին եվրոպական որոշման հիման վրա հետևյալ դեպքերում՝

ա) պահանջվող անձը, հնարավորություն ունենալով լքելու այն անդամ պետության տարածքը, որին իրեն հանձնել են, չի արել դա իր վերջնական ազատումից հետո 45 օրվա ընթացքում, կամ լքելուց հետո կրկին վերադարձել է այդ տարածք:

բ) պահանջվող անձը համաձայն է, որպեսզի իրեն ձեռքարկման մասին եվրոպական որոշման հիման վրա հանձնեն որևէ անդամ պետության՝ բացառությամբ ի կատար ածող անդամ պետության: Համաձայնությունը ներկայացվում է որոշում կայացնող անդամ պետության

իրավասու դատական մարմիններին և ամրագրվում է այդ պետության ներպետական իրավունքին համապատասխան: Համաձայնությունը կազմվում է այնպես, որպեսզի պարզ լինի, որ տվյալ անձը համաձայնել է կամավոր և հետևանքների լիարժեք իրազեկվածությամբ: Այդ առումով, անձը ունի պաշտպան ունենալու իրավունք:

գ) պահանջվող անձի վրա չի տարածվում «արարքի որակման անփոփոխելիության մասին նորմը»՝ հոդված 27«3»«ա», «ե», «զ» և «է»-ին համապատասխան:

3. Ի կատար ածող դատական մարմինը տալիս է իր համաձայնությունը անձին մեկ այլ անդամ պետության հանձնելու համար՝ համաձայն հետևյալ կանոնների՝

ա) համաձայնություն տալու վերաբերյալ հարցումը ներկայացվում է 9-րդ հոդվածին համապատասխան՝ հոդված 8«1»-ում նշված տեղեկությունների և հոդված 8«2»-ում նշված կարգով կատարված թարգմանության հետ միասին:

բ) համաձայնությունը տրվում է այն դեպքում, երբ հանցագործությունը, որի համար պահանջվում է համաձայնությունը, սույն Շրջանակային որոշման համաձայն այնպիսի հանցագործություն է, որի կատարողը ենթակա է հանձնման:

գ) որոշումն ընդունվում է հարցումն ստանալուց հետո ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում:

դ) համաձայնություն տալը պետք է մերժվի 3-րդ հոդվածում նշված հիմքերի առկայության դեպքում և կարող է մերժվել միայն 4-րդ հոդվածում նշված հիմքերի առկայության դեպքում:

5-րդ հոդվածում նշված դեպքերում որոշում կայացնող անդամ պետությունը պետք է տրամադրի այդ հոդվածով նախատեսված երաշխիքները:

4. Անկախ սույն հոդվածի 1-ին պարբերությունից, անձը, որին հանձնել են ձերբակալման մասին եվրոպական որոշման համաձայն, չի հանձնվում երրորդ պետության առանց նրան հանձնած անդամ պետության իրավասու մարմնի համաձայնության: Համաձայնությունը տրվում է անդամ պետության համար պարտադիր կոնվենցիաներին, ինչպես նաև վերջինիս ներպետական իրավունքին համապատասխան:

Հոդված 29 **Գույքի փոխանցումը**

1. Որոշում կայացնող դատական մարմնի հարցման հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ, ի կատար ածող դատական մարմինը, իր ներպետական իրավունքին համապատասխան, առգրավում և փոխանցում է այն գույքը, որը՝

ա) կարող է պահանջվել որպես ապացույց կամ

բ) ձեռք է բերվել պահանջվող անձի կողմից հանցագործության արդյունքում:

2. Սույն հոդվածի 1-ին պարբերությունում նշված գույքը փոխանցվում է նույնիսկ այն դեպքում, երբ ձեռքակալման մասին եվրոպական որոշումը չի կարող ի կատար ածվել պահանջվող անձի մահվան կամ փախուստի պատճառով:

3. Եթե 1-ին պարբերությունում նշված գույքը ենթակա է առգրավման կամ բռնագրավման ի կատար ածող անդամ պետության տարածքում, ապա վերջինս կարող է, եթե այդ գույքն անհրաժեշտ է ընթացող քրեական վարույթի կապակցությամբ, այն ժամանակավորապես պահել կամ փոխանցել որոշում կայացնող անդամ պետությանը՝ վերադարձնելու պայմանով:

4. Սույն հոդվածի 1-ին պարբերությունում նշված գույքի նկատմամբ ի կատար ածող անդամ պետության կամ երրորդ անձանց ձեռք բերած բոլոր իրավունքները պահպանվում են: Երբ գոյություն ունեն նման իրավունքներ, որոշում կայացնող անդամ պետությունը քրեական վարույթի ավարտից անմիջապես հետո գույքն անվճար վերադարձնում է ի կատար ածող անդամ պետությանը:

Հոդված 30

Ծախսերը

1. Ձեռքակալման մասին եվրոպական որոշումն ի կատար ածելու համար ի կատար ածող անդամ պետության տարածքում կատարված ծախսերը կատարում է այդ անդամ պետությունը:

2. Բոլոր մյուս ծախսերը կատարում է որոշում կայացնող անդամ պետությունը:

ԳԼՈՒԽ 4

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 31

Առնչությունը այլ իրավական փաստաթղթերին

1. Չսահմանափակելով դրանց կիրառությունն անդամ պետությունների և երրորդ պետությունների միջև հարաբերություններում, սույն Շրջանակային որոշումն անդամ պետությունների միջև հարաբերություններում 2004 թվականի հունվարի 1-ից փոխարինում է էքստրադիցիայի ոլորտում կիրառվող հետևյալ կոնվենցիաների համապատասխան դրույթներին՝

ա) «Էքստրադիցիայի մասին» 1957 թվականի դեկտեմբերի 13-ի եվրոպական կոնվենցիա, դրա 1975 թվականի հոկտեմբերի 15-ի լրացուցիչ արձանագրություն, 1978 թվականի մարտի 17-ի երկրորդ լրացուցիչ արձանագրություն, և «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» 1977 թվականի հունվարի 27-ի եվրոպական կոնվենցիա՝ էքստրադիցիայի մասով:

բ) Էքստրադիցիայի հարցումների ուղարկման մեթոդները պարզեցնելու և արդիականացնելու մասին Եվրոպական համայնքների 12 անդամ պետությունների միջև 1989 թվականի մայիսի 26-ի համաձայնագիր:

գ) Եվրոպական միության անդամ պետությունների միջև Էքստրադիցիայի պարզեցված ընթացակարգի մասին 1995 թվականի մարտի 10-ի կոնվենցիա.

դ) Եվրոպական միության անդամ պետությունների միջև Էքստրադիցիայի հարցերով 1996 թվականի սեպտեմբերի 27-ի կոնվենցիա.

ե) «Հնդհանուր սահմաններին ստուգումների աստիճանական վերացման մասին» 1985 թվականի հունիսի 14-ի Շենգենյան համաձայնագիրը կիրարկող 1990 թվականի հունիսի 19-ի կոնվենցիայի 4-րդ գլխի III բաժին:

2. Անդամ պետությունները կարող են շարունակել կիրառել սույն Շրջանակային որոշման ընդունման պահին գործող երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերը, կամ պայմանավորվածությունները այնքանով, որքանով դրանք նպաստում են սույն Շրջանակային որոշման նպատակների ընդլայնմանը կամ տարածմանը, կամ օգնում են ձեռքարկված մասին Եվրոպական որոշման առարկա հանդիսացող անձանց հանձնման ընթացակարգի հետագա պարզեցմանը կամ հեշտացմանը:

Անդամ պետությունները կարող են սույն Շրջանակային որոշումն ուժի մեջ մտնելուց հետո կնքել երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր կամ պայմանավորվածություններ, եթե այդ համաձայնագրերը և պայմանավորվածությունները նպաստում են սույն Շրջանակային որոշման դրույթների ընդլայնմանը կամ տարածմանը, կամ օգնում են ձեռքարկված մասին Եվրոպական որոշման առարկա հանդիսացող անձանց հանձնման ընթացակարգի հետագա պարզեցմանը կամ հեշտացմանը, մասնավորապես՝ ամրագրելով 17-րդ հոդվածով նախատեսվածից ավելի կարճ ժամկետներ, ընդլայնելով հոդված 2«2»-ով նախատեսված հանցագործությունների ցուցակը, էլ ավելի սահմանափակելով 3-րդ և 4-րդ հոդվածներով նախատեսված մերժման հիմքերը, կամ նվազեցնելով 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով նախատեսված նվազագույն սահմանային չափը:

Երկրորդ ենթապարբերությունում նշված համաձայնագրերը և պայմանավորվածությունները չեն կարող որևէ դեպքում շոշափել դրանց մասնակից չհանդիսացող անդամ պետությունների հարաբերությունները:

Սույն Շրջանակային որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում անդամ պետությունները Խորհրդին և Հանձնաժողովին ծանուցում են սույն հոդվածի 2-րդ պարբերության առաջին ենթապարբերությունում նշված այն համաձայնագրերի և պայմանավորվածությունների մասին, որոնք իրենք ցանկանում են շարունակել կիրառել:

Անդամ պետությունները Խորհրդին և Հանձնաժողովին նաև ծանուցում են սույն հոդվածի 2-րդ պարբերության երկրորդ ենթապարբերությունում նշված ցանկացած նոր համաձայնագրի և պայմանավորվածության մասին՝ դրա ստորագրումից հետո երեք ամսվա ընթացքում:

3. Եթե սույն հոդվածի 1-ին պարբերությունում նշված կոնվենցիաները կամ համաձայնագրերը կիրառվում են անդամ պետությունների այնպիսի տարածքների նկատմամբ, որոնց վրա չի տարածվում սույն Շրջանակային որոշումը, կամ այնպիսի տարածքների նկատմամբ, որոնց արտաքին հարաբերությունների համար պատասխանատու է անդամ պետությունը և որոնց վրա

չի տարածվում սույն Շրջանակային որոշումը, այդ կոնվենցիաները կամ համաձայնագրերը շարունակում են կարգավորել այդ տարածքների և այլ անդամ պետությունների միջև գոյություն ունեցող հարաբերությունները:

Հոդված 32 **Անցումային դրույթ**

1. 2004 թվականի հունվարի 1-ից առաջ ստացված՝ էքստրադիցիայի վերաբերյալ հարցումները շարունակում են կարգավորվել էքստրադիցիայի վերաբերյալ գոյություն ունեցող փաստաթղթերով: Այդ ամսաթվից հետո ստացվող հարցումները կարգավորվում են սույն Շրջանակային որոշման հիման վրա անդամ պետությունների ընդունած կանոններով: Այդուհանդերձ, ցանկացած անդամ պետություն իրավասու է Խորհրդի կողմից սույն Շրջանակային որոշման ընդունման պահին հայտարարություն անել՝ նշելով, որ ինքը, որպես ի կատար ածող անդամ պետություն, կշարունակի իր կողմից նշվող որոշակի ամսաթվից առաջ կատարված արարքների վերաբերյալ ստացվող հարցումներին ընթացք տալ էքստրադիցիայի այն համակարգի հիման վրա, որը կիրառվել է նախքան 2004 թվականի հունվարի 1-ը: Այդ ամսաթիվը չի կարող 2002 թվականի օգոստոսի 7-ից ավելի ուշ լինել: Նշված հայտարարությունը հրապարակվում է Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում: Նշված հայտարարությունը կարող է ցանկացած ժամանակ չեղյալ հայտարարվել:

Հոդված 33 **Ավստրիային և Ջիբրալթարին վերաբերող դրույթներ**

1. Քանի դեռ Ավստրիան չի փոփոխել «Auslieferungs- und Rechtshilfegesetz»-ի հոդված 12«1»-ը և ամենաուշը մինչև 2008 թվականի դեկտեմբերի 31-ը, այն կարող է թույլատրել իր ի կատար ածող դատական մարմիններին, որպեսզի վերջիններս հրաժարվեն ձերբակալման մասին եվրոպական որոշումն ի կատար ածելուց, եթե պահանջվող անձն Ավստրիայի քաղաքացի է, և եթե արարքը, որի համար կայացվել է ձերբակալման մասին եվրոպական որոշումը, Ավստրիայի իրավունքով պատժելի չէ:

2. Սույն Շրջանակային որոշումը կիրառվում է Ջիբրալթարի նկատմամբ:

Հոդված 34 **Կիրարկումը**

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ, որպեսզի իրագործեն սույն Շրջանակային որոշման դրույթները մինչև 2003 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. Անդամ պետությունները Խորհրդի գլխավոր քարտուղարությանը և Հանձնաժողովին փոխանցում են այն դրույթների տեքստը, որոնցով սույն Շրջանակային որոշմամբ իրենց վրա դրված պարտավորությունները փոխատեղվում են իրենց ներպետական իրավունք: Այդ դրույթների տեքստը փոխանցելիս յուրաքանչյուր անդամ պետություն կարող է նշել, որ ինքը

նույնանման ծանուցում տված այլ անդամ պետությունների հետ հարաբերություններում անմիջականորեն կիրառում է սույն Շրջանակային որոշումը:

Խորհրդի գլխավոր քարտուղարությունը անդամ պետություններին և Հանձնաժողովին հաղորդում է հոդվածներ 7«2»-ի, 8«2»-, 13«4»-ի և 25«2»-ի համաձայն ստացված տեղեկությունները: Խորհրդի գլխավոր քարտուղարությունը այդ տեղեկությունները նաև հրապարակում է Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում:

3. Խորհրդի գլխավոր քարտուղարության հաղորդած տեղեկությունների հիման վրա Հանձնաժողովը ոչ ուշ, քան մինչև 2004 թվականի դեկտեմբերի 31-ը Եվրոպական խորհրդարանին և խորհրդին գեկույց է ներկայացնում սույն Շրջանակային որոշման կատարման վերաբերյալ՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնելով նաև օրենսդրական առաջարկներ:

4. Խորհուրդը 2003 թվականի երկրորդ կեսի ընթացքում անցկացնում է ուսումնասիրություն՝ մասնավորապես անդրադառնալով անդամ պետությունների կողմից սույն Շրջանակային որոշման դրույթների գործնական կիրառությանը, ինչպես նաև Շենգենյան տեղեկատվական համակարգի գործառնությանը:

Հոդված 35 **Ուժի մեջ մտնելը**

Սույն Շրջանակային որոշումն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում դրա հրապարակման օրվան հաջորդող քսաներորդ օրվանից:

Կատարած է Լյուքսեմբուրգում, 2002 թվականի հունիսի 13-ին:

Խորհրդի կողմից՝
Նախագահ Մ. ՌԱՋՈՅ ԲՐԵՅ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ⁽¹⁾

Սույն Որոշումը կայացվել է իրավասու դատական մարմնի կողմից: Խնդրում են ստորև նշված անձին ձերբակալել և հանձնել մեզ՝ նրա նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու կամ ազատազրկման հետ կապված պատիժ, կամ կալանավորման որոշում ի կատար ածելու նպատակով:

⁽¹⁾ Սույն Որոշումը պետք է կազմված կամ թարգմանված լինի ի կատար ածող անդամ պետության պաշտոնական լեզուներից որևէ մեկով, եթե այդ պետությունը հայտնի է, կամ՝ այդ պետության համար ընդունելի ցանկացած այլ լեզվով:

ա) Տեղեկություններ պահանջվող անձի ինքնության մասին.
.

Անունը.

Ազգանունը (ազգանունները).
.....

Օրիորդական անունը, առկայության դեպքում.
.....

Կեղծանունները, առկայության դեպքում.
.....

Սեռը.

Քաղաքացիությունը.
.

Ծննդյան օրը, ամիսը և տարեթիվը.
...

Ծննդյան վայրը.

Բնակության վայրը և (կամ) հայտնի հասցեն.
.....

Լեզուն (լեզուները), որը (որոնք) հասկանում է պահանջվող անձը (եթե հայտնի է).
.....

.....

Պահանջվող անձի տարբերանշանները/նկարագրությունը.
.....

.....

Պահանջվող անձի լուսանկարը և մատնահետքերը, եթե դրանք առկա են և կարող են փոխանցվել, կամ այն անձի տվյալները, ում հետ կարելի է կապվել այդ տեղեկությունները ստանալու համար, կամ ԴՆԹ բնութագիրը (այն դեպքում, երբ այդ ապացույցը կարող է տրամադրվել, սակայն այստեղ չի ներառվել):

բ) Որոշումը, որի վրա հիմնված է ձերբակալման մասին որոշումը.

1. Ձերբակալման մասին որոշումը կամ հավասար իրավաբանական ուժ ունեցող դատական որոշումը.

Տեսակը.

2. Ի կատար ածելու ենթակա դատավճիռը.
.....

Հղումը.

զ) Տեղեկություններ պատժաչափի մասին.

1. Ազատագրկման հետ կապված պատժի կամ կալանքի առավելագույն տևողությունը, որը կարող է նշանակվել տվյալ հանցագործության (հանցագործությունների) համար.

.....
.....

2. Ազատագրկման հետ կապված նշանակված պատժի կամ կալանքի տևողությունը.

.....

Պատժի չկրած մասը.

.....
.....

դ) Անձի բացակայության պայմաններում կայացված որոշումը և.

- տվյալ անձն անձամբ դատակոչվել է կամ այլ կերպ տեղեկացվել այն դատական նիստի ամսաթվի և վայրի մասին, որի արդյունքում կայացվել է նրա բացակայության պայմաններում կայացված որոշումը,

կամ

-տվյալ անձն անձամբ չի դատակոչվել կամ այլ կերպ տեղեկացվել այն դատական նիստի ամսաթվի և վայրի մասին, որի արդյունքում կայացվել է նրա բացակայության պայմաններում կայացված որոշումը, սակայն հանձնումից հետո նրան կտրվեն հետևյալ իրավական երաշխիքները (այդ երաշխիքները կարող են նաև տրվել նախապես)

Նշեք իրավական երաշխիքները.

.....
.....
.....

ե) Հանցագործությունները.

Սույն Որոշումը վերաբերում է ընդհանուր թվով
հանցագործությունների:

Հանցագործության (հանցագործությունների) փաստական հանգամանքների նկարագրություն՝
ներառյալ ժամանակը, վայրը և հանցագործության (հանցագործությունների) կատարմանը
պահանջվող անձի մասնակցության աստիճանը.

.....
.....
.....

Հանցագործության (հանցագործությունների) բնույթը և իրավական դասակարգումը, օրենքի
կիրառելի դրույթը /օրենսգիրքը.

.....
.....
.....
.....
.....

I. Համապատասխան դեպքում, վանդակի մեջ նշում կատարեք այն հանցագործության կամ
հանցագործությունների դիմաց, որը (որոնք) որոշում կայացնող անդամ պետությունում
պատժելի է(են) առնվազն 3 տարի ժամկետով ազատազրկմամբ կամ կալանքով՝ կայացնող
անդամ պետության օրենքներով նախատեսված կարգով.

- ☐ անդամություն հանցավոր համագործակցությունում.
- ☐ ահաբեկչություն.
- ☐ մարդկանց առևտուր.
- ☐ երեխաների սեռական շահագործում և մանկական պոռնոգրաֆիա.
- ☐ թմրադեղերի և հոգեմեդիկամենտների նյութերի անօրինական առևտուր.
- ☐ զենքի, զինամթերքի և պայթուցիկ նյութերի անօրինական առևտուր.
- ☐ կոռուպցիա.
- ☐ կեղծում, ներառյալ Եվրոպական համայնքների ֆինանսական շահերը շոշափող՝
«Եվրոպական համայնքի ֆինանսական շահերի պաշտպանության մասին» 1995 թվականի
հուլիսի 26-ի կոնվենցիայի իմաստով.
- ☐ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացում.
- ☐ կեղծ փողեր, այդ թվում՝ եվրո, պատրաստելը.
- ☐ համակարգչային հանցագործություններ.
- ☐ բնապահպանական հանցագործություններ՝ ներառյալ վտանգված կենդանական և բուսական
տեսակների առևտուր.
- ☐ չթույլատրված մուտքի և բնակության օժանդակություն.
- ☐ սպանություն, ծանր մարմնական վնասվածք.
- ☐ մարդկանց օրգանների և հյուսվածքների անօրինական առևտուր.
- ☐ առևանգում, ազատությունից ապօրինի զրկել և պատանդ վերցնել.
- ☐ ռասիզմ և քսենոֆոբիա.
- ☐ ավազակություն՝ կազմակերպված խմբի կողմից կամ զենքի գործադրմամբ.
- ☐ մշակութային բարիքների, այդ թվում՝ հնաոճ իրերի և արվեստի գործերի անօրինական
առևտուր,

- ☐ խարդախություն.
- ☐ բանդիտիզմ և շոքում.
- ☐ ապրանքների նմանակում և կեղծում.
- ☐ վարչական փաստաթղթերի կեղծում և առևտուր.
- ☐ վճարային միջոցների կեղծում.
- ☐ հորմոնային նյութերի և աճը խթանող այլ միջոցների անօրինական առևտուր.
- ☐ միջուկային կամ ռադիոակտիվ նյութերի անօրինական առևտուր.
- ☐ հափշտակված տրանսպորտային միջոցների թրաֆիքինգ.
- ☐ բռնաբարություն.
- ☐ հրկիզում.
- ☐ միջազգային քրեական դատարանի իրավասությանը վերապահված հանցագործություններ.
- ☐ օդանավերի (նավերի) զավթում.
- ☐ սաբոտաժ:

II. Վերը նշված I բաժնում չնշված հանցագործության (հանցագործությունների) լրիվ նկարագրությունը.

.....

.....

զ) Գործի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ (ոչ պարտադիր տեղեկություններ).

(Ծանոթագրություն. այստեղ կարելի է նշումներ կատարել հանցագործության արտատարածքային բնույթի, վաղեմության ժամկետի ընդհատումների կամ հանցագործության այլ հետևանքների մասին)

.....

.....

է) Սույն Որոշումը վերաբերում է նաև այն գույքի առգրավմանը և փոխանցմանը, որը կարող է պահանջվել որպես ապացույց.

Սույն Որոշումը վերաբերում է նաև այն գույքի առգրավմանը և փոխանցմանը, որը պահանջվող անձը ձեռք է բերել հանցագործության արդյունքում.

Գույքի (և դրա գտնվելու վայրի) նկարագրություն (եթե հայտնի է).

.....

.....

.....

ը) Հանցագործության (հանցագործությունների) համար, որի (որոնց) հիման վրա ընդունվել է սույն Որոշումը, նախատեսված է ազատագրկման հետ կապված ցմահ պատիժ կամ ցմահ կալանք, կամ այդ հանցագործության (հանցագործությունների) համար արդեն նշանակվել է ազատագրկման հետ կապված ցմահ պատիժ կամ ցմահ կալանք.

- որոշում կայացնող անդամ պետության իրավական համակարգը թույլ է տալիս նշանակված պատժի կամ միջոցի վերանայում՝ միջնորդության հիման վրա կամ առնվազն 20 տարի հետո, ինչը այդ պատիժը կամ միջոցն ի կատար չածելու նպատակ է հետապնդում,

և(կամ)

-որոշում կայացնող անդամ պետության իրավական համակարգը թույլ է տալիս կիրառել համաներում, որը, որոշում կայացնող անդամ պետության իրավունքի կամ պրակտիկայի համաձայն, տարածվում է անձի վրա, և որը հետապնդում է այդ պատիժը կամ միջոցն ի կատար չածելու նպատակ:

i) Դատական մարմինը, որը կայացրել է որոշումը.

Պաշտոնական անվանումը.

Ներկայացուցչի անունը.⁽¹⁾

Զբաղեցրած պաշտոնը (կոչումը/դասային աստիճանը).....
.....

Գործի համարը.....

Հասցեն.....
.....

Հեռ. (երկրի կոդը) (շրջանի(քաղաքի) կոդը) (.).....

Ֆաքս. (երկրի կոդը) (շրջանի (քաղաքի) կոդը) (.).....

Էլ-փոստ.....

Հանձնման հետ կապված գործնական խնդիրներ լուծելու համար պատասխանատու անձի կոնտակտային տվյալները.
.....

Եթե ձերբակալման մասին եվրոպական որոշումներն ուղարկելու և վարչական ստացման պատասխանատվությունը դրվել է կենտրոնական մարմնի վրա.

Կենտրոնական մարմնի անվանումը.
.....

⁽¹⁾ Տարբեր լեզուներով տարբերակների մեջ կներառվի հղում դատական իշխանությունը «կրողին» («holder»):

Կոնտակտային անձը, առկայության դեպքում (պաշտոնը/դասային աստիճանը և անունը).

.....

Հասցեն.

.....

Հեռ. (պետության կոդը) (շրջանի/քաղաքի կոդը) (.)

....

Ֆաքս. (պետության կոդը) (շրջանի/քաղաքի կոդը) (.)

....

Էլ-փոստ.

Որոշում կայացնող դատական մարմնի և (կամ) դրա ներկայացուցչի ստորագրությունը.

.....

Անունը.

Զբաղեցրած պաշտոնը (կոչումը/դասային աստիճանը).

.....

Ամսաթիվը.

Պաշտոնական կնիքը (առկայության դեպքում)